ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՌՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՈԼՅԱՆ ԱՂԱՎՆԻ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ԺԹ.00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ- 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ն.Ռ.Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ս.Ռ.Գևորգյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս.Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. նոյեմբերի 8–ին ժամը 14:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-Ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ.հոկտեմբերի 7-ին

Փիլիսոփայության և հոգեբանություն
064 մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կ.Ե.Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ առկա են գլոբալիզացիոն գործընթացներ, համաշխարհային հանրակցության ինտեգրացիա, սոցիալական, հոգեբանական փոխակերպումներ, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցական տարաբնույթ միջոցների անընդհատ ներհոսք հասարակական կյանք, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը առաջնային և խիստ հրատապ նշանակություն է ձեռք բերում: Այս գործընթացում առավելապես կարևորագույն դերակատարում է ստանձնում ընտանիքը՝ իբրև սոցիալականացման առաջնային ինստիտուտ, որի անմիջականորեն ներգործում է ընտանիքում ձևավորվող անձի կայացման, նրա մտավոր, սոցիալական հուզական և զարգացման այլ կողմերի վրա:

Հոգեբանության գիտակարգում բավարար չափով ուսումնասիրված չէ ընտանեկան միջավայրի ազդեցության խնդիրները երեխայի կրեատիվության, նրա՝ իբրև ստեղծագործող անձի ձևավորման ու զարգացման, կոնստրուկտիվ դրսևորումների համատեքստում: Ամբողջությամբ բացահայտված չէ ծնողների և երեխաների անձնային դիրքերի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների արդյունքում ընտանեկան կրթող միջավայրի բաղադրատարրերը, կրտսեր դպրոցականի կողմից ծնողի հետ համագործակցային փոխհարաբերությունների ստեղծման պայմանները, կրթող ընտանեկան միջավայրի ներքին կառուցվածքում դոմինանտող բաղադրատարրերը, որոնց ներքո և որոնց ազդեցությամբ ձևավորվում և սոցիալականացվում է կրտսեր դպրոցականի անձը՝ իբրև հասարակության ինքնուրույն, լիարժեք, լիիրավ, կրեատիվ վարքով և կոնստրուկտիվ դիրքորոշումներով անդամ: Վերոնշյալ խնդիրների բացահայտմանն է հավակնում ներկայացված ատենախոսությունը:

Հետազոտության նպատակն է խորությամբ ու բազմակողմանիորեն ուսումնասիրել ընտանեկան կրթող միջավայրի ներքո և նրա ազդեցությամբ կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորման մեխանիզմներն ու առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտն է կրտսեր դպրոցականի ձևավորվող կրեատիվ և կոնստրուկտիվ անձը ընտանեկան կրթող միջավայրի համագործակցային փոխհարաբերություններում:

Հետազոտության առարկան է կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորման պայմաններն ու մեխանիզմները ընտանեկան կրթող միջավայրի համատեքստում:

Հետազոտության վարկածն է կրտսեր դպրոցականի անձի հոգեբանական, մասնավորապես կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորումն էապես պայմանավորված է ընտանեկան կրթող միջավայրում մեծահասակների անձնային դիրքի համագործակցային ուղղվածությամբ:

Հետազոտության ***խնդիրներն են.***

1. Վերլուծել ընտանեկան բազմաբովանդակ միջավայրերի վերաբերյալ հիմնական մոտեցումները հոգեբանական գրականության մեջ:
2. Ուսումնասիրել և ընդհանրացնել կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորման գործում ընտանեկան կրթող միջավայրի դերի տեսական և փորձարարական հետազոտությունները:
3. Բազմահայեցակարգային վերլուծության ենթարկել կրտսեր դպրոցականի անձի տարիքային առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները:
4. Բացահայտել կրտսեր դպրոցականի անձի զարգացման համար առաջատար հանդիսացող մեծահասակների անձնային դիրքի համագործակցային ուղղվածության հիմնական օրինաչափություններ:
5. Ուսումնասիրել ընտանեկան կրթող միջավայրի հիերարխիկ (աստիճանակարգային) կառուցվածքը և վերջինիս ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորման և դրսևորման վրա:
6. Բացահայտել կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների զարգացման վարքագծային, դրդապատճառային, տեղեկատվական, հուզահոգեբանական, կազմակերպչական, տարածական-առարկայական, հիգիենիկ, համագործակցային բաղադրատարրերը, և ներկայացնել որակական վերլուծության տեսքով:
7. Մշակել ընտանիքի համագործակցային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման հարցարան:
8. Մշակել ծնողական անձնային ուղղվածության շտկման հանձնարարականներ ընտանեկան անբավարար կրթող միջավայրում:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերն են՝

Մարդու զարգացման վրա միջավայրի ազդեցության հետազոտության ընդհանուր տեսական մոտեցումները (Գ.Ա.Կովալյով, Դ.Ժ.Մարկովիչ, Ի.Վ.Ռավիչ-Շչերբո, Մ.Չերնոուշեկ և ուրիշներ), անձնավորության կայացման մեջ «արտաքինի» և «ներքինի» հարաբերակցության հիմնախնդրի, հոգեկան զարգացման գործընթացում ներքին պատճառականության և ակտիվության դերի հետազոտությունները (Լ.Ի.Բոժովիչ, Ս.Լ.Ռուբինշտեյն, Գ. էյդեմիլլերը և ուրիշներ): Երեխայի զարգացման վրա միջավայրի ազդեցության ուսումնասիրությունները, /Շ.Ա.Ամոնաշվիլու, Ա.Լ.Վենգերի, Լ.Ս.Վիգոտսկու, Վ.Վ.Դավիդովի], Ա.Գ.Ասմոլովի, Պ.Յա.Գալպերինի, Ա.Ն.Լեոնտևի, Դ.Բ.Էլկոնինի, Վ.Դ.Շադրիկովի և ուրիշներ/, ընտանիքի զարգացման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների վերաբերյալ հիմնական դրույթները գիտական հոգեբանական մտքի մեջ (Է.Բերն, Ա.Յա.Վարգա, Ս.Է.Կարկլինա, Տ.Ա.Մարկովիչ, Տ.Վ.Սենկո, Է.Ֆրոմ,

Գ.Տ.Հոմենտաուսկաս, Ի.Ա.Խոմենկո, Լ.Բ.Շնեյդեր, Տ.Ի.Շուլգա, Է.Էրիքսոն և ուրիշներ), ընտանեկան կրթող միջավայրի վերաբերյալ հետազոտությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են վարքի և գործունեության արդյունքների վերլուծության, կենսագրական, զրույցի և դիտման քարտ-մեթոդիկաներ, հեղինակային հարցարաններ, ընտանիքների հետազոտության, անհատական բնութագրերի մեթոդներ, Ռ. Բերնսի, Ն. Կաուֆմանի «Ինքնանկար», «Իմ ընտանիքը» մեթոդիկաները, Ռենե Ժիլի միջանձնային հարաբերությունների ախտորոշման, Տորրանսի «ստեղծագործական ընդունակությունների ախտորոշման թեստ» մեթոդիկաները, Վ.Ստոլինի «ծնողական վերաբերմունքի» թեսթ-հարցարանը:

Հետազոտության գիտական նորությունն է այն է, որ

- Բացահայտվել են ընտանեկան միջավայրի համագործակցային ուղղվածության հոգեբանական բաղադրատարրերը, դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի համակողմանի զարգացման վրա:
- Բացահայտվել են ընտանեկան կրթական միջավայրի աստիճանակարգային կառուցվածքն ու նրա բաղադրատարրերը:

- Առաջարկվել է կրթական միջավայրի կառուցվածքային-աստիճանակարգային՝ ներառելով նրա բաղկացուցիչ տարրերը և ցուցանիշները:
- Բացահայտվել են կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների ձևավորմանը նպաստող ընտանեկան կրթական միջավայրի պայմանները:
- Առանձնացվել և նկարագրվել են երեխաների տիպերը, որոնք դաստիարակվում են «հագեցած» և «անբավարար» կրթական միջավայրում:
- Մշակվել են հանձնարարականներ մանկավարժ-հոգեբանների համար ընտանեկան ոչ բավարար կրթական միջավայրում հոգեշտկողական աշխատանքների իրականացման նպատակով:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Հետազոտության արդյունքների հիման վրա ներմուծվել է «մեծահասակների անձնային դիրքի համագործակցային ուղղվածություն» գաղափարը: Ցույց է տրվել վերջինիս բաղադրատարրերը և դրանց փոխազդեցությունը:

Ստեղծվել է ընտանիքի համագործակցային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման հարցարան, ինչպես նաև մշակվել են ընտանեկան համագործակցային կրթական միջավայրի ստեղծման մանկավարժահոգեբանական հանձնարարականներ:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Ստացված տվյալները կարող են կիրառվել ընտանիքների հետ մանկավարժ-հոգեբանների խորհրդատվական, հոգեշտկողական աշխատանքներում: Դպրոցում աշխատող մանկավարժ-հոգեբանների համար մշակվել են հանձնարարականներ, որոնք կիրառելի են մանկավարժ-հոգեբանների գործնական աշխատանքներում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական **դրույթներն** են՝

1. Կրտսեր դպրոցականի անձի համակողմանի զարգացումը կրետաիվ և կոնստրուկտիվ որակներով պայմանավորված է ընտանեկան հագեցած և անբավարար միջավայրերի առկայությամբ:
2. Ընտանեկան կրթող միջավայրի աստիճանակարգային կառուցվածքի նշանակալի տարրը կրտսեր դպրոցականի նկատմամբ ծնողների անձնային դիրքի համագործակցային ուղղվածությունն է:
3. Անձնային դիրքի համագործակցային ուղղվածությամբ ծնողները արդյունավետորեն նպաստում են կրտսեր դպրոցականի անձի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորմանն ու զարգացմանը:
4. Ընտանեկան կրթող միջավայրը դոմինանտող նախապայման է միջանձնային կառուցողական փոխհարաբերությունների համար:
5. Ընտանեկան միջավայրի հիերարխիկ (աստիճանակարգային) կառուցվածքում վարքագծային, դրդապատճառային, տեղեկատվական, հուզահոգեբանական, կազմակերպչական, տարածական-առարկայական, հիգիենիկ, համագործակցային բաղադրատարրերի բացակայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում անբավարար ընտանեկան միջավայրի ստեղծման համար:
6. Կարևորվում են «անբավարար» ընտանեկան միջավայրում ծնողների վարքի հոգեշտկման հանձնարարականները, որոնք ներառում են սեփական դիրքորոշման մասին պատկերացումների, ընտանիքում փոխհարաբերությունների պայմանների փոփոխության անհրաժեշտության գիտակցման վարժություններ, ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտային իրավիճակների լուծման միջոցներ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ապահովվել է հիմնախնդրի վերաբերյալ առկա հիմնարար հետազոտությունների վերլուծությամբ և տեսական դրույթներով, աշխատանքի հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան փորձարարական մեթոդների համալիր ընտրությամբ և կիրառմամբ, փորձարկվողների անհրաժեշտ քանակի ընդգրկմամբ, ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծությամբ:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը : Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարանի Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնում, գիտական սեմինարներում և գիտաժողովներում: Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևան քաղաքի թիվ 187, 159, 135 դպրոցներում:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, հավելվածներից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի հրատապությանը, ներկայացվել է նրա մշակվածության աստիճանը, նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, օբյեկտը և առարկան: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության իրականացման փուլերը, ատենախոսության փորձաքննությունը ու կառուցվածքը:

Ատենախոսության՝ «Ընտանիքի բազմահայեցակետ դիտարկում և ինտեգրատիվ մոտեցում» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին գլխի՝ «Ընտանիքի զարգացման պատմական ընթացքը, տեղը և դերը ժամանակակից հասարակական հարաբերություններում» ենթագլխում դիտարկվում է «ընտանիք» հասկացության էությունը, նրա, իբրև սոցիալական ինստիտուտի և անձի սոցիալականացման առաջնային օղակի, զարգացման շարժընթացը, առանձնահատկությունները, տեղն ու դերը հասարակական հարաբերություններում, ընտանիքը ներկայացված է իբրև առաջնային սոցիալական խումբ, որում ձևավորվում, սոցիալականացվում է անձը (Ն.Ն.Օբոզով, Վ.Վ Բոյկո, Վ.Ա.Բորիսով, Վ.Ն.Դրուժինին, Ա.Գ.Խայմ, Ն.Յա. Սոլովյով, Վ.Ի.Զացեպին և այլն):

Առաջին գլխի երկրորդ՝ «Ընտանիքի հոգեբանական բնութագրիչները և սոցիալական գործառույթները» ենթագլխում ներկայացվել է ընտանիքի սոցիալ-հոգեբանական բաղադրիչները, միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների, պարտականությունների և իրավունքների տեսանկյունից, անհատական, ֆունկցիոնալ-դերային, սպասումների համատեղելիության, հոգևոր համատեղելիության գործոնները, որոնց ներդաշնակությունն ու կոնգրուենտությունը անմիջականորեն պայմանավորում են ընտանիքի կայունությունն ու երկարակեցությունը /Վ.Դրուժինին. Վ.Զացեպին, Վ.Յուստիցկիս/:

Առաջին գլխի երրորդ՝ « Ներընտանեկան հարաբերություններ: Ընտանեկան արժեքային համակարգ և համատեղ կյանքի ճգնաժամերը» ենթագլխում ներկայացվել է ընտանեկան դերադիրքային գործառույթները, ընտանեկան արժեքներն ու սպասումները, դրանց մասին ընտանիքի անդամների պատկերացումները, ընտանեկան

փոխհամաձայնեցվածության հիմնախնդիրները: Մեկնաբանվել են ընտանեկան ճգնաժամերի պատճառահետևանքային կապերը:

Ատենախոսության՝ երկրորդ «Կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը ընտանեկան կրթող միջավայրի համատեքստում» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Երկրորդ գլխի առաջին «**Ընտանեկան կրթող միջավայրի վերլուծությունը տարբեր գիտակարգերում**» ենթագլխում ներկայացվել է «միջավայր», մասնավորապես «ընտանեկան միջավայր» եզրույթը փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության գիտակարգերում (Ջ.Բերկլի, Ջ.Լոք, Լ.Ֆոյերբախ, Կ.Հելվեցիուս, Ռ.Օուեն, Յ.Ռուսսո, Մ.Չերնոուշեկ, Դ.Մարկովիչ, Յա.Կորչակ, Յա.Կոմենսկի, Ժ.Պիաժե և այլն), հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձը իր սոցիալականացման առաջին իսկ պահից հայտնվում է որոշակի սոցիալական միջավայրում և անպայմանորեն կրում վերջիններիս ազդեցությունը:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Միջավայրի ազդեցության դերը կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում. բազմահայեցակետ վերլուծություն» ենթագլխում ներկայացվել է կրտսեր դպրոցականի անձի զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, նրա մտածողության, վարքի դրդապատճառները, արժեքային համակարգի ձևավորման հետ կապված խնդիրները /Ժ. Պիաժեի, Լ. Վիգոտսկու, Լ. Բոժովիչ, Տ. Շուլգայի և այլն/ նրա անձի տարիքային զարգացման, դրդապատճառային, ուսումնական, սոցիալական, շփման ու հաղորդակցության, իմացական, վարքային, բարոյական, հասարակայնորեն նշանակալի համակարգերի ձավորման և զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ներկայացված է «կրթական միջավայր» հասկացության կենսաբանական, հոգեբանական և սոցիալական բաղադրատարրերը, դրանցից յուրաքանչյուրի կարևորությունը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման և կայացման վրա, նրա տարիքային նորագոյացությունների, կամածին մտածողության, ուշադրության, հիշողության, իրականության նկատմամբ նոր ճանաչողական վերաբերմունքի զարգացման, դրդապատճառային ոլորտի, ինքնագնահատականի և ինքնավերահսկողության զարգացման վրա /Յու. Կորչակ, Մ. Չերնոուշեկ, Տ. Սենկո, Ա. Բոդալյով, Լ. Բոժովիչ, Բ. Վոլկով, Ա. Դելա Տորե, Կ. Ռոսա, Դ. Սպոկ, Է. Շեֆֆեր և այլն/:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ՝ «Կրտսեր դպրոցական-մեծահասակ փոխհարաբերությունները ընտանեկան կրթող միջավայրի համատեքստում» ենթագլխում ներկայացվել է կրտսեր դպրոցական-մեծահասակ փոխհարաբերությունների, դաստիարակության ոճերի առանձնահատկությունները և այդ համատեքստում ընտանեկան կրթական միջավայրի ձևավորման խնդիրները:

Ատենախոսության երրորդ «Ընտանեկան կրթող միջավայրում կրտսեր դպրոցականի անձի հոգեբանական առանձնահատկությունների

փորձարարական հետազոտություն» գլխում ներկայացված է ատենախոսության ողջ փորձարարական աշխատանքների ամբողջությունը փուլային ստորակարգությամբ և վերջարդյունքային վերլուծությամբ:

Երրորդ գլխի առաջին՝ «Հետազոտության կազմակերպումն ու օգտագործված մեթոդները» ենթագլխում ներկայացված է հետազոտության կազմակերպման ձևաչափը, ողջ մեթոդական ապարատը, որոնք և հնարավորություն ընձեռեցին ծառայել հետազոտության նպատակին, հաստատել վարկածը և հանգուցալուծել խնդիրները, հանգելով համապատասխան եզրակացությունների:

Ընդգրկված հետազոտվողների համակազմն էր. կրտսեր դպրոցական 210 երեխաներ /1-ից 4-րդ դասարանների աշակերտներ/, 199 ընտանիքներ և 20 դասվարներ: Հետազոտությանը մասնակցել են 5-10 տարեկան դպրոցականներ՝ 110 աղջիկներ և 100 տղաներ:

Հետազոտության տեղորոշումը՝ թիվ 135 դպրոց, թիվ 159 դպրոց, թիվ 187 դպրոց:

Երեք փուլերով անցկացրած հետազոտության ընթացքում կիրառվել են վարքի և գործունեության արդյունքների վերլուծության, կենսագրական, զրույցի հեղինակային հարցարաններ և դիտման քարտ-մեթոդիկաներ, առանձին ընտանիքների հետազոտության, անհատական բնութագրերի մեթոդներ, Ռ. Բերնսի, Ն. Կաուֆմանի «Ինքնանկար», «Իմ ընտանիքը», Ռենե Ժիլի միջանձնային հարաբերությունների ախտորոշման, Տորրենսի «ստեղծագործական ընդունակությունների ախտորոշման թեստ» մեթոդիկաները, Վ.Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեսթ-հարցարանը»:

Առաջին փուլում ուսումնասիրվել են 1-4-րդ դասարանների աշակերտներ, որոնց շրջանում կիրառվել են Ռ. Բերնսի, Ն. Կաուֆմանի «Ինքնանկար», «Իմ ընտանիք» մեթոդիկաները, Ռենե Ժիլի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման», Տորրենսի «Ստեղծագործական ունակությունների ախտորոշման թեսթերը», դպրոցում կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվության ախտորոշման հարցարան:

Հետազոտության երկրորդ փուլի գերխնդիրը նշված երեխաների ընտանիքներում առկա փոխհարաբերությունների /199 ընտանիք//մայրիկ, հայրիկ, քույր, եղբայր, տատիկ, պապիկ/ ուսումնասիրությունն էր, որի նպատակով կիրառվել է Վ.Վ.Ստոլինի՝ ծնողական վերաբերմունքի թեսթ-հարցարանը, Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը» պրոեկտիվ թեսթը, հեղինակային հարցարաններ ընտանեկան համագործակցային միջավայրի բացահայտման համար /ծնող-երեխա փոխազդեցության համագործակցային հարաբերությունների ախտորոշման հարցարան/:

Երրորդ փուլում՝ ուսումնասիրել են 210 երեխաներին դասավանդող 20 դասվարի, նրանց ռեֆերանտայնության գործոնը բացահայտելու նպատակով: Այս ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջացավ ելնելով առաջին փուլի, հատկապես երեխաների պրոյեկտիվ մեթոդիկաների տվյալներից:

Եվ այսպես, առաջին փուլում ուսումնասիրված է 210 կրտսեր դպրոցականների մասին.

Զրույցի մեթոդի միջոցով փորձ է արվել իրազեկվել կրտսեր դպրոցականների ընտանիքի կառուցվածքի, անդամների քանակի, ծնողների մասնագիտության: Կրտսեր դպրոցականների վերաբերմունքը իրենց իսկ ընտանիքների, ծնողների, իրենց ապագա պլանների, շրջապատի /ընկերների, մեծահասակների/ նկատմամբ:

Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը» պրոյեկտիվ թեսթով բացահայտվել է կրտսեր դպրոցականի միջանձնային հարաբերություններն ընտանիքում, կրտսեր դպրոցականի ենթագիտակցական վերաբերմունքն ընտանիքի և նրա անդամների նկատմամբ:

«Ինքնանկար» պրոյեկտիվ թեսթը նույնպես իր կիրառական նշանակությամբ համահունչ է «Իմ ընտանիքը» մեթոդիկային: Այս մեթոդիկայի կիրառման նպատակն է պարզել կրտսեր դպրոցականի պատկերացումները իր անձի՝ «Ես»-ի, նրա հուզական վիճակների և ընկալման առանձնահատկությունների վերաբերյալ, քանի որ կոնստրուկտիվ որակի ձևավորմանը կարող է նպաստել սեփական անձի մասին համարժեք և ոչ համարժեք պատկերացումները:

Ռենե Ժիլի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան կիրառվել է բացահայտելու կրտսեր դպրոցականի վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, նրա միջանձնային հարաբերությունները ինչպես հասակակիցների, այնպես էլ մանկավարժների և ծնողների հետ: Այս թեստը լայն հնարավորություններ է ընձեռել ընտանեկան համագործակցային մթնոլորտի առկայությունը փաստելու համար:

Ե. Տորրենսի՝ «Ստեղծագործական ընդունակությունների ախտորոշման թեսթ»-ի միջոցով բացահայտվել է կրտսեր դպրոցականի ստեղծագործական ակտիվությունը տարրերը:

Հեղինակային դիտման քարտ հարցարանը նպատակ է հետապնդել բացահայտել կրտսեր դպրոցականի մասին երկկողմ պատկերացումներ: Քարտը ներառում է 36 խնդրահարույց կետեր, որտեղ ամփոփված են և դեմոգրաֆիական, և ֆիզիոլոգիական, և սոցիալ-հոգեբանական ցուցանիշներ:

Հեղինակային «Կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվ որակների ախտորոշում» հարցարանը ստեղծվել է և տեղայնացվել է՝ համապատասխան հետազոտության խնդիրների և նպատակի և հնարավորություն ընձեռել բացահայտել կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվ որակի դրական և բացասական ուղղվածության աստիճանը:

Վ.Վ.Ստոլինի, Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանը» կիրառվել է կրտսեր դպրոցականի նկատմամբ ծնողի վերաբերմունքային և դիրքորոշումային համակարգը բացահայտելու նպատակով:

Այս մեթոդիկաների միջոցով բացահայտվել է ծնողական վերաբերմունքի հինգ կողմեր.

- Երեխային ընդունում-մերժում,
- համագործակցություն,
- սիմբիոզ,
- վերահսկողություն,
- վերաբերմունքը կրտսեր դպրոցականի անհաջողությունների նկատմամբ:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Հետազոտության արդյունքները և դրանց հոգեբանական վերլուծությունը» ենթագլխում ներկայացվել է հետազոտության արդյունքները և վերլուծական համադրական մոտեցման համապատասխան աղյուսակներն ու դիագրամաները:

Կրեատիվ և կոնստրուկտիվ որակների բացահայտման ուղղությամբ կատարված բոլոր հետազոտություններին մասնակցել են հետազոտության մեջ ընդգրկված բոլոր կրտսեր դպրոցականները (ընդհանուր թվով 1000 երեխա, որոնցից ընտրվել են 210-ը):

Հեղինակային «դպրոցում կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվիզմի ախտորոշման հարցարանը» հնարավորություն ընձեռեց մեզ բացահայտել 110 երեխաների /65տղա, 45 աղջիկ/, այսինքն՝ հետազոտվածների 55,7%-ը, իսկ Տորրենսի թեսթով՝ բացահայտվեցին կրեատիվ 100 երեխաների /40 տղա, 60 աղջիկ/, այսինքն հետազոտվածների 45.9%-ը, որոնք թվային տվյալներով ներկայացված են ստորև

«Դպրոցում կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվ որակների ախտորոշման» հարցարանի և Տորրենսի «Ստեղծագործական ունակությունների բացահայտման վերբալ թեսթի» միջինացված տվյալները Հետազոտության արդյունքները /%/							
1	2	3	4	5	6	7	8
Երեխաների տարիքը	5	6	7	8	9	10	ընդ. թ.
Քանակը	98	187	219	206	203	87	1000
Կոնստրուկտիվ որակների առկայություն	11	23	25	18	21	12	110
Կրեատիվ որակների առկայություն	17	29	26	16	9	3	100
Ընդհանուր տոկոսը	22.9	21.5	19.3	14.8	12.1	9.4	100

Արդյունքների վերլուծության ժամանակ նկատվեց վառ արտահայտված մի օրինաչափություն. տարիքի աճի հետ զուգընթաց կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով երեխաների քանակը նվազում է,

փաստ, որը խոսում է տարբեր պատճառահետևանքային կապերի մասին, որոնք խոչընդոտում են երեխայի կրեատիվ և կոնստրուկտիվ որակների առկայությանը: Այդ պատճառներից մեկն էլ, մեր կարծիքով, կրտսեր դպրոցականի կողմից ընտանիքի մոդելի և ընտանիքում եղած միջանձնային փոխհարաբերությունների ընկալումն է:

«Ինքնանկար» պրոեկտիվ թեսթով հաստատվեցին մեր որոշ դիտարկումներ: Երեխաներից շատերի մոտ նույնպես աչքի էին ընկնում կոնստրուտիվ որակի տարրեր:

Դրանք բավական ակնառու ցույց են տալիս սեփական «Ես»-ի կոնստրուկտիվ և կրեատիվ դրսևորումները: Այս ամենը արտահայտվում է նրանց համապատասխան նկարներում: Ատենախոսության մեջ ներկայացված է վերոհիշյալ մեթոդիկայի արդյունքների ամփոփ նկարագիրը:

«Իմ ընտանիքը» մեթոդիկայի օգտագործումը մեզ հնարավորություն է ընձեռել պարզել կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով կրտսեր դպրոցականների ընտանեկան փոխհարաբերությունները: Թեստն անց է կացվել նաև ընտրված երեխաների ծնողների հետ, և ստացվել Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի» թեսթը հավաստող տվյալներ: Թեստը արտացոլում է կրտսեր դպրոցականի ենթագիտակցական վերաբերմունքն ընտանիքի և նրա անդամների նկատմամբ: Դա նշանակում է, որ եթե երեխան իսկապես համագործակցում է ընտանիքի հետ, ապա այդ հանգամանքն անպայման կարտացոլվի կրտսեր դպրոցականի կողմից պատկերված նկարներում: Եվ, իսկապես, այն երեխաները, որոնց մոտ բարձր էր համապատասխան թեսթի համագործակցության սանդղակի արդյունքները, նրանց՝ «Իմ ընտանիքը» թեմայով նկարները նույնպես առանձնանում էին համագործակցող ակնառու դրսևորումներով:

Ատենախոսության մեջ ներկայացված աղյուսակներում ամփոփ ձևով ներկայացված է վերոհիշյալ մեթոդիկայի արդյունքները:

Հետազոտության երկրորդ փուլի արդյունքներով հաստատվեցին ծնողների որոշ նկարագրություններ:

Այստեղ նույնպես վառ արտահայտվեց նախորդ փուլի հետազոտության ժամանակ դրսևորված օրինաչափությունը. այն է. որքան փոքր է տարիքային խումբը, այնքան շատ են կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով երեխաների թիվը: Սակայն առկա էին նաև որոշ թվով երեխաներ, որոնք մանկավարժի նկարագրության օժտված էին կոնստրուկտիվ և կրեատիվ որակներով /հետազոտության երրորդ ուղղություն/, բայց չէին նկատվել ծնողների կողմից և, հակառակը: Որպեսզի կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով օժտված կրտսեր դպրոցականները նկատվեն, գնահատվեն և՛ ծնողի կողմից, և՛ մանակավարժի, մեր կողմից, կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ, ծնողների և մանկավարժների հետ, ինչը ավելի հանգամանորեն ներկայացվել է ատենախոսության մեջ:

Ա. Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանի» միջոցով ստացված արդյունքների վերլուծությունը

հնարավորություն ընձեռեց համոզվել հետևյալ տեսակետներում. կրեատիվ և կոնստրուկտիվ որակների ձևավորման կարևորագույն խթան է ծնողների համագործակցային և հուզականորեն հագեցված միջավայրի ստեղծումը ի տարբերություն սառը պաշտոնական փոխհարաբերությունների: Ստացված արդյունքները հավաստում են, որ կրեատիվ և կոնստրուկտիվ երեխաների ծնողների մեծ մասի մոտ բարձր է հատկապես կրտսեր դպրոցականի ընդունման և համագործակցությունն արտահայտող միավորները, որը խոսում է այն մասին, որ ծնողն ընդունում է իր երեխային այնպիսին, ինչպիսին որ նա կա, հարգում նրա անհատականությունը:

Ստորև ներակայացված է Ա. Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանի» միջինացված տվյալները

Հետազոտության արդյունքները /%/							
1	2	3	4	5	6	7	8
Հետազոտված կ/դ տարիքը	5	6	7	8	9	10	ընդ. թ.
Քանակը	28	52	51	34	30	15	210
Հետազոտված կ/դ ծնողները	26	51	50	32	28	12	199
Ա. Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանի» միջինացված տվյալները /%- ներով/							
Երեխային ընդունում-չընդունում (մերժում)	8	14	13	9	8	4	27%
Համագործակցություն	15	27	26	18	17	8	52%
Սիմբիոզ (Համակեցություն)	11	20	19	13	11	6	38%
Վերահսկողություն	5	10	9	6	5	3	19%
Վերաբերմունքը կրտսեր դպրոցականի անհաջողությունների նկատմամբ	4	7	6	4	3	1	13%

Դիտումների արդյունքում նկատվեց նաև, որ կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով կրտսեր դպրոցականի հետ աշխատանքում ընտանիքից, ծնողից բացի մեծ դեր և ազդեցություն ունի նաև մանկավարժը: Նրա մասնագիտական և անձնային ոչ ադեկվատ

որակները նույնպես կարող են ճնշող և զարգացմանը խոչընդոտող պատճառներ դառնալ:

Ռենե Ժիլի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան» մեզ ավելի լայն հնարավորություններ ընձեռեց փաստել կրեատիվ և կոնստրուկտիվ որակներով երեխաների ներընտանեկան համագործակցային փոխհարաբերությունների առկայությունը, բացահայտել դպրոցականի վերաբերմունքը հարազատների, շրջապատի նկատմամբ, ինչպես նաև ախտորոշել որոշ անձնային որակներ:

Ռենե Ժիլի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման» մեթոդիկայի արդյունքները աղյուսակի տեսքով ներկայացված են ատենախոսության մեջ:

Ծնող-երեխա փոխազդեցության համագործակցային հարաբերությունների ախտորոշման հարցարանը հնարավորություն ընձեռեց հավաքագրել և ամբողջական տեսքով ներկայացնել արդեն ստացված մեթոդիկաների միջինացված տվյալները:

Ծնող-երեխա փոխազդեցության համագործակցային հարաբերությունների ախտորոշման թեսթի տվյալները աղյուսակի տեսքով ներկայացվում են ատենախոսության մեջ:

Երրորդ փուլում ամփոփվեցին մանկավարժների հետ կատարված դիտումների, հարցումների արդյունքները: Ատենախոսության մեջ ներկայացված է հեղինակային «Դպրոցում կոնստրուկտիվության ախտորոշման հարցարանի» եռակողմ արդյունքները, որոնք գնահատել են և՛ երեխաները, և՛ ուսուցիչները, և՛ ծնողները:

Երրորդ փուլի հիմնական արդյունքների վերլուծությունը փաստում է, որ կրտսեր դպրոցական տարիքի համար չափանմուշային /ռեֆերենտային/ անձ է այն մանկավարժը, ով նկատում և խթանում է կրտսեր դպրոցականի կոնստրուկտվ ու կրեատիվ որակները: Նկատելի է նաև այն օրինաչափությունը, որ երեխան իր խաղերի ժամանակ կարող է լինել մեծահասակ-ուսուցչի կամ մեծահասակ-ծնողի դերում, եթե նրանց միջև իրական կյանքի մոդելում ևս գործում է համագործակցային փոխահարաբերություններ:

Երրորդ գլխի երրորդ «Հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծություն» ենթագլխում ներկայացվել է ընտանիքի և դպրոցի միջավայրների ազդեցությունների հարաբերակցության վերլուծությունը: Հետազոտության երեք փուլերի հոգեբանական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացումը մեծապես պայմանավորված է ընտանեկան համագործակցային բնույթից: Հատուկ ուշադրության է արժանի ընտանեկան համագործակցային կրթական միջավայրի սոցիալական շփման բաղադրատարրի ազդեցությունը կրտսեր դպրոցականի սոցիալականացման վրա, որտեղ հատուկ տեղ է զբաղեցնում կրտսեր դպրոցականի նկատմամբ ծնողների սուբյեկտային դիրքը: Այդ իմաստով ընտրվեցին Ռենե Ժիլի «Միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշման», Տորրենսի «Ստեղծագործական

ունակությունների ախտորոշման թեսթ»-ի և կոնստրուկտիվության բացահայտման հարցարանի արդյունքները:

Համահարբերակցական կապի վերհանման նպատակով կատարված վերլուծության արդյունքները զետեղված են ատենախոսության մեջ աղյուսակի տեսքով:

Հետազոտության թվային տվյալների վերլուծությունները ակնառու դարձնում կրտսեր դպրոցականի վերաբերմունքի, նրա կրետաիվ և կոնստրուկտիվ որակների միջև: Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների մի շարք ցուցանիշներ փոխկապված են նրա վարքի սոցիալական համարժեքության ցուցանիշի հետ: Վարքի սոցիալական համարժեքությունը պայմանավորվում է անձնային այնպիսի հատկությունների հետ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը և լիդերությունը:

Ջերմ, հուզականորեն հագեցված միջավայրի, բարեկեցությունը ընտանիքում, ընտանեկան համագործակցային մթնոլորտում հուզական-հոգեբանական բաղադրատարրի առկայությունը թույլ են տալիս ծնողներին սովորեցնել կրտսեր դպրոցականին վարքի առավել հարմարվողական և կառուցողական հմտություններ, ինչը դրսևորվում է նրա՝ հասակակիցների հետ շփման և սոցիալական կոմպետենտության մեջ: Երեխաների նկատմամբ անձնային դիրքի համագործակցային ուղղվածության համախտանիշով բնութագրվող ծնողների վերաբերմունքը, որը աչքի է ընկնում ջերմությամբ, ըմբռնումով, բարեհամբուրությամբ, շփման մեծ ծավալով, նրանց անկախության և կարծիքի նկատմամբ հարգանքով, նպաստում է սոցիալականացման բարձր մակարդակի ձևավորմանը, որը ենթադրում է առավել արդյունավետ հմտությունների յուրացում, անկախության ավելի մեծ աստիճան, հասունություն, ինքնավստահություն, ակտիվություն, զսպվածություն, ընկերասիրություն և շրջապատող իրավիճակում կողմնորոշվելու ունակություն:

Հետազոտության ընթացքում կրտսեր դպրոցականի անձի հոգեբանական առանձնահատկությունները դիտարկվել են ընտանեկան համագործակցային և ոչ համագործակցային միջավայրում: Զուգահեռ ուսումնասիրվել է նաև կրթական միջավայրը և կրտսեր դպրոցականի զարգացման մեջ վերջինիս դերը: Բացահայտվել է, որ ընտանեկան կրթական միջավայրն է ձևավորում կրտսեր դպրոցականի մեջ արժեքների որոշակի համակարգ և վերաբերմունք շրջապատող աշխարհի, իր նկատմամբ՝ կախված համագործակցային կամ ոչհամագործակցային /խոսքը նյութականի մասին չէ/ լինելու հանգամանքից:

Ընտանեկան և դպրոցական կրթող միջավայրում երեխաների տիպերի բացահայտման նպատակով անցկացվել է որակական վերլուծություն, որի արդյունքում հետազոտվող կրտսեր դպրոցականները դասակարգվել են 8 հետևյալ խմբերի

1-ին խումբ՝ ինտելեկտուալ զարգացած կրտսեր դպրոցականներ,

2-րդ խումբ՝ ծնողների հետ հարաբերություններում կոնֆորմ կրտսեր դպրոցականներ,

3-րդ խումբ՝ ինտելեկտուալ զարգացած, բայց ոչ սոցիալականացված կրտսեր դպրոցականներ,

4-րդ խումբ՝ բարձր իմացական ակտիվությամբ կրտսեր դպրոցականներ,

5-րդ խումբ՝ ուսուցման մոտիվացիայով կրտսեր դպրոցականներ,

6-րդ խումբ՝ երևակայության և ֆանտազիայի բարձր մակարդակով կրտսեր դպրոցականներ,

7-րդ խումբ՝ սիբլինգներին կապված կրտսեր դպրոցականներ,

8-րդ խումբ՝ անվստահ կրտսեր դպրոցականներ:

Այսպիսով, ընտանիքի և դպրոցի միջավայրների ազդեցությունների հարաբերակցության ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց ծնողների և երեխաների դիրքորոշումների փոխկապվածությունը, ընտանիքի և ուսումնական կազմակերպության կրթող միջավայրի համագործակցային միասնության առկայությունը, որը շրջապատի միջավայրի հարաբերությունների պայմաններից մեկն է:

Կատարված համահարաբերակցային և որակական վերլուծության հիման վրա հնարավոր դարձավ առանձնացվել է ընտանեկան կրթող միջավայրի հիերարխիկ (աստիճանակարգային) կառուցվածքն իր վարքագծային, դրդապատճառային, տեղեկատվական, հուզահոգեբանական, կազմակերպչական, տարածական-առարկայական, հիգիենիկ, համագործակցային բաղադրատարրերով:

Երրորդ գլխի չորրորդ՝ «Ընտանեկան համագործակցային կրթական միջավայրի ստեղծման հոգեբանամանկավարժական հանձնարարականներ» ենթագլխում
ներկայացվել է մեր կողմից մշակված է ընտանեկան համագործակցային կրթական միջավայրի ստեղծման հոգեբանամանկավարժական հանձնարարականներ դպրոցի հոգեբանի, մանկավարժների և ծնողների համար:

Ատենախոսության «եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Ներընտանեկան միջավայրի համապատասխան գործոնների /հագեցածություն և անբավարարություն/ առկայությունը պայմանավորում է կրտսեր դպրոցականի անձի սոցիալականացման կրեատիվ և կոնստրուկտիվ ուղղվածության ընթացքը:
2. Ներընտանեկան միջավայրի աստիճանակարգային կառուցվածքը ընտանիքի կենսակերպը բնութագրող վճռորոշ գործոն է:
3. Կրտսեր դպրոցականի անձի համակողմանի զարգացման կրեատիվ և կոնստրուկտիվ ուղղվածության համատեքստում առաջնային նշանակություն է ձեռք բերում ծնողների անձնային դիրքի համագործակցային ուղղվածությունը:
4. Անձնային դիրքի համագործակցային ուղղվածությամբ ընտանիքի առկայությունը պայմանավորում է ներընտանեկան միջանձնային փոխհարաբերությունների ձևավորումն ու զարգացումը:
5. Ընտանեկան միջավայրի աստիճանակարգային կառուցվածքը ներառում է վարքագծային, դրդապատճառային, տեղեկատվական,

հուզահոգեբանական, կազմակերպչական, տարածական-առարկայական, հիգիենիկ, համագործակցային բաղադրատարրերը:

6. Վարքագծային, դրդապատճառային, տեղեկատվական, հուզահոգեբանական, կազմակերպչական, տարածական-առարկայական, հիգիենիկ, համագործակցային բաղադրատարրերով հագեցած ընտանեկան միջավայրը պայմանավորում է կրեատիվ և կոնստրուկտիվ կրտսեր դպրոցականների անձը:
7. Անբավարար ընտանեկան միջավայրի ծնողների վարքին ուղղված հոգեշտկման հանձնարարականները մեղմացնում են ոչ համագործակցային ուղղվածության բացասական ներուժը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում:

1. Ա.Վ.Քոլյան, «Անձի ձևավորման վրա կրթող միջավայրի ազդեցության հիմնախնդիրները հոգեբանական և մանկավարժական գիտության մեջ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ 3 (6) 2009 թ., էջ 185-191
2. Ա.Վ.Քոլյան, «Ընտանեկան կրթական միջավայրը՝ իբրև երեխայի անձի ձևավորման վճռորոշ գործոն», ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր N 2-3 (14-15) Երևան 2011 թ., էջ 43-49
3. Ա.Վ.Քոլյան, «Տարիքային առանձնահատկությունները հոգեբանական դրսևորումների կրտսեր դպրոցականների շրջանում», Գորիսի պետական համալսարանի միջազգային երկրորդ գիտաժողովի աշխատանքների ժողովածու, 2011 թ. էջ 763-767,
4. Ն.Հակոբյան, Ա.Վ.Քոլյան, «Կրտսեր դպրոցականի անձի հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործում ընտանեկան կրթական միջավայրի ներքին կառուցվածքի ազդեցության գործոնային վերլուծություն», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ 3. 2013 թ., էջ 89-94

КОЛЯН АГАВНИ ВОЛОДЯЕВНА
“СРЕДА СЕМЬИ КАК ФАКТОР РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ”

Дисертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 “Теория и история психологии”.
Защита диссертации состоится 08 ноября 2013 г. в. 14 часов на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, улица Тиграна Меци 17.

Резюме

Актуальность исследования. На современном этапе человеческого развития все изменения в обществе, а именно: интенсивные процессы глобализации, мировой интеграции рынков государств и наций, преобразований в социальной и психологической сферах, автоматизации, интенсивного развития информационных технологий, различных современных средств связи, неуклонно проникающих в жизнь общества – всё это оставляет неизгладимый отпечаток на подрастающем поколении и делает всестороннее и гармоничное развитие личности всё более важным и первостепенным.

Вместе с тем, нет достаточно полных исследований по вопросам, связанным с ролью семьи в развитии у детей *креативности*, конструктивного проявления в поведении, формировании в школьниках творческого потенциала. В целом не определены элементы среды семьи, не представлены доминантные компоненты образовательной среды семьи, направленные на формирование у детей младшего школьного возраста личностного смысла, *креативных качеств*, позволяющих закладывать основания для развития личности в целом.

Цель исследования состоит во всестороннем и глубоком изучении влияния образовательной среды внутри семьи на творческое развитие ребёнка младшего школьного возраста, изучении механизмов и особенностей формирования у детей креативных и конструктивных качеств.

Научная новизна исследования в том, что

- определены основные психологические внутрисемейные компоненты комплиментарной направленности; влияние каждого из этих компонентов на всестороннее развитие детей младшего школьного возраста;

- дано обоснование того, что образовательная среда семьи – это не совокупность отдельных обстоятельств, а иерархическая структура определенных уровней с присущими им компонентами;
- предложена структурно-уровневая модель образовательной среды семьи, которая включает составляющие её элементы и показатели;
- определены те условия, которые способствуют формированию психологических особенностей креативной и конструктивной направленности у детей младшего школьного возраста в образовательной среде семьи;
- разработана система творческих заданий и рекомендаций педагогам-психологам для работы с родителями, изменению их позиций в вопросах взаимодействия с детьми младшего школьного возраста.

Теоретическое значение исследования.

На основе результатов исследования в психологическую науку введено понятие: ***"комплиментарная направленность личностной позиции взрослых"*** и показаны его компоненты. В зависимости от позиций родителей предложены следующие виды семей: "материально обеспеченные-заинтересованные", "материально обеспеченные-незаинтересованные", "материально необеспеченные-заинтересованные", "материально необеспеченные-незаинтересованные".

Практическое значение исследования.

Полученные данные могут быть использованы педагогами-психологами в их практической работе со семьями. Разработаны задания и для педагогов-психологов, работающих в школе.

В первой главе диссертации дается всестороннее рассмотрение понятия «Семья» в разных аспектах, используется интегративный подход.

Во второй главе рассмотрены вопросы формирования личности у детей младшего школьного возраста в образовательной среде семьи.

Третья глава посвящена анализам результатов, полученных экспериментальным путём и связанных с психологическими особенностями креативной и конструктивной направленности у детей младшего школьного возраста в рамках образовательной среды семьи.

В конце диссертации даётся заключение.

По теме диссертации опубликованы четири научные статьи.

QOLYAN AGHAVNI VOLODYA

"FAMILY ENVIRONMENT AS A PERSON DEVELOPMENT FACTOR"

Thesis for degree of candidate of psychological sciences, speciality 19.00.01 "Theory and History of Psychology"

The defence of the thesis will be held on November the 8th of 2013 at 14:00 at the sesion of the Special Board of philosophy and psychology 064 HAC, awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Metsi 17.

SUMMARY

Research relevence: In the current stage of human development when globalizational processes, worldwide integration, diverse social, psychological exchanges, flow of information technologies and different means of telecommunications into public life lead to automation, the person comprehensive and harmonious development becomes urgent and primary.

The components of family educational environment, conditions of cooperative relations development with parents by junior schoolchild, the dominant components in the inner structure of educational family environment are not wholly discovered.

The aim *of the thesis is to thouroughly study the mechanisms and pecularities of junior scoolchild's creative and constructive development under the family educational environment.*

The scientific novelty of the thesis:

- The cooperative psychological components of family environment and their influence on junior schoolchild's comprehensive development are studied.
- It is justified that family educational environment is not just a combination of influences of saparate situations.It has certain hierarchical structure with its components.

- The hierarchical model of educational environment is suggested which includes its constituent parts and indicators.
- The conditions which enhance the development of psychological pecularities of junior choolchild in family educational environment are discovered.
- Some recommandations for pedagogue-psychologists are developed for implementing the psycho-correctional works of parents' attitudes in the inadequate family educational environment.

Theoretical value

On the basis of the research results the" cooperative direction of adults' personal position" concept has been introduced. Their components and interaction have been presented, as well as family classification according to the parents' position in the family on the following order: financially secured-interested, financially vulnerable - interested, financially secured-uninterested, financially vulnerable -interested, financially vulnerable-uninterested.

Practical value

The results can be used in the advisoral and psychocorrectional works of pedagogue-psychologist's with families. Some recommondations are developed for pedagogue-psychologists working at schools which are applicable in the practical works of pedagogue-psychologists.

The first chapter of the thesis covers family multiviewing.

Second chapter touches upon the problems of junior schoolchild's development in the context of family environment.

The third chapter presents the experimental research of psychological pecularities of junior schoolchild in the family educational environment and results analysis.

Conclusion summarises the thesis.

There are four scientific articles on this thesis.